

որ ինքն ալ յետոյ եղերական վախճան մ'ունեցաւ արտերու մօր զրկաց մէջ: Երբ որ մ'որսի ժամանակ «արբեայ»՝ ընկած էր անոք ծառի մը շքին ներքեւ, յանկարծ աչերը բացաւ ապշահար յոյն բերդի մը ծայրը, եւ իսկոյն գահավէժ՝ վերստին փակեց զանոնք յաւերժաբար պարսպին ոտքը, այսպէս քաւելով իւր սպանած մետրապոլտին ոճիրը (Կիր. 58): Արտաշէս եւ Գագիկ, նման իրենց նախնոյն Պապայ՝ իրենց դեռարուսիկ հասակէն զերի արտին, եւ արտին արբեցութեանը մէջ թագակորոյսք, երկուքն ալ դժբախտ ծնունդներն էին հայ աւագորերոյն անբարեխառն կենցաղավարութեան:

4. — Ո՛ր է Անին: — Բուն տեղն է հարցնելու. ո՛ւր է Շիրակայ նազելի ոտտանը, հայրենի հին քաղաքաց այդ մարգարիտը, միջնադարեան Ասիոյ այդ բազմաբոյր ծաղիկը, որ մեծահաւատ ու մեծագանձ հոգիներու ձեռակերտած «հազար եւ մի եկեղեցեաց» երկնասլացիկ գմբեթներով պսակուած՝ կը սիգար դշխոյի մը պէս. որ Բոսպորի պառաւ մրցակցին նախանձը կը զրգոէր, քանասարիկ գայլուն բիրերը կ'այրէր, եւ թաթար վագրին աւրինոտ ժանիքը կը սրէր իւր դէմ: Ահաւոր հարուածոց ներքեւ ճմլեցաւ այն, եւ